


ԱՐՔՅՈՒՐՆԵՐ



- Դիմակների՝ ներառյալ շնչադիմակների (respirator) մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ ph.lacounty.gov/masks
- Cal/OSHA-ի կանոնների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ dir.ca.gov/dosh/coronavirus/Non_Emergency_Regulations/
- Աշխատողների փոխհատուցման մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.dir.ca.gov/dwc/InjuredWorker.htm>
- Հաշմանդամության ապահովագրության հայցերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ edd.ca.gov/en/Disability/How_to_File_a_DI_Claim_in_SDI_Online
- Լուս Անջելեսի քաղաքապետարանի՝ հիվանդության վճարովի արձակուրդի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ wagesla.lacity.org
- Իմանալու համար, թե ինչպես բողոք ներկայացնել Cal/OSHA, այցելեք՝ dir.ca.gov/covid/workplace-issues.html
- Լուս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության «Մեկուսացման ուղեցույցի» համար այցելեք՝ ph.lacounty.gov/covidcommunity
- Հանրային Առողջության Խորհուրդի ծրագիրը ծառայություններ է մատուցում բարձր վտանգավորության որոշ արդյունաբերական ոլորտների աշխատակիցներին: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <http://ph.lacounty.gov/media/Coronavirus/phcouncils/>

Եթե COVID-19-ով ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ԴԵՊՋՈՒՄ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒ ՎՏԱՆԳԸ ՁԵՉ ՀԱՄԱՐ ԱՎԵԼԻ ՄԵԾ Է, ՄՏԱԾԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԶԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՊԵՍՉԻ ԻՆՔՆԵՐԴ ՁԵՉ ՊԱՇՏՊԱՆԵՔ ԱՃԻԱՏԱԿԱՅՐՈՒՄ:



- (1) Եթե փակ տարածքում աշխատում եք այլ մարդկանց շրջապատում, ձեր գործատուից պահանջեք շնչադիմակ (respirator): Կրեք այն, երբ փակ տարածքներում կամ փոխադրամիջոցում գտնվում եք այլ մարդկանց հետ: Եթե չեք կարողանում կրել շնչադիմակ, հաջորդ լավագույն տարբերակներն են «կրկնակի դիմակը» (վիրաբուժական դիմակի վրայից դեմքը լավ գրկող կտորե դիմակ կրելը) կամ դեմքն ամուր գրկող դիմակ կրելը: Իմացեք ավելին այստեղ՝ ph.lacounty.gov/masks:
- (2) Ուրիշներից պահպանեք 6 ոտնաչափ հեռավորություն, եթե ձեր աշխատանքային պայմանները դա թույլ են տալիս:
- (3) Ընդմիջումներին, երբ դուք պետք է հանեք ձեր դիմակը՝ ուստիլու կամ խմելու համար, փորձեք դա անել բացօթյա տարածքում և հեռու ուրիշներից: Եթե դուք պետք է ուստեք փակ տարածքում այլ մարդկանց շրջապատում, բացեք դռներն ու պատուհանները և որքան հնարավոր է հեռավորություն պահպանեք մյուսներից:
- (4) Բացեք ձեր աշխատանքային տարածքի պատուհանները կամ դռները, եթե դա անվտանգ է: Թարմ օդն օգնում է նվազեցնել օդում կաթիլների քանակը՝ նվազեցնելով COVID-19-ով վարակվելու վտանգը:
- (5) Անպայման ստացեք COVID-19-ի դեմ բոլոր պահանջվող պատվաստումները: Իմացեք ավելին այստեղ՝ ph.lacounty.gov/howtogetvaccinated:
- (6) Եթե դուք վարակվեք COVID-19-ով, դուք կարող եք ձեռք բերել դեղամիջոցներ, որոնք օգնում են ձեզ ծանր չհիվանդանալ: Բերանով ընդունվող դեղերը պետք է սկսել օգտագործել ախտանիշների հայտնվելուց հետո 5 օրվա ընթացքում: Դեղերն անվճար են: Խոսեք ձեր բժշկի հետ կամ զանգահարեք (833) 540-0473 հեռախոսահամարով: Իմացեք ավելին այստեղ՝ ph.lacounty.gov/covidmedicines:



COVID-19-ի անվտանգություն. աշխատողների իրավունքները

Լուս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն www.publichealth.lacounty.gov

3/19/2024

Աշխատողների իրավունքների գրքույկի բովանդակություն: Ներկայումս հրապարակված է այստեղ՝ publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/business/Workers_Rights_Pamphlet.pdf

(Armenian)



COUNTY OF LOS ANGELES
Public Health

COVID-19-ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ



Ըստ Cal/OSHA-ի՝ ձեր գործատուն պարտավոր է քայլեր ձեռնարկել ձեզ COVID-19-ից պաշտպանելու համար: Ծանաչեք ձեր իրավունքները և տեղեկացրեք խախտումների մասին հետևյալ կերպ.

- Խոսեք Ձեր ղեկավարի կամ անվտանգության ներկայացուցչի հետ:
- Խոսեք Ձեր միության ներկայացուցչի հետ:
- Բողոք ներկայացրեք Cal/OSHA՝ զանգահարելով (213) 576-7451 կամ 833-579-0927 հեռախոսահամարներով:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐՄԱՏՈՒՄ



- Ձեր գործատուն պետք է պատրաստ ունենա աշխատավայրում COVID-19-ի տարածումը կանխելու ընթացիկ գրավոր ծրագիր, որը նկարագրում, գնահատում և կարգավորում է COVID-19-ի վտանգները ձեր աշխատավայրում, և պետք է աշխատակիցներին վերապատրաստի կանխարգելման այս ծրագրի համար: Սա կարող է լինել առանձին ծրագիր կամ գործատուի «Վնասվածքների և հիվանդությունների կանխարգելման ծրագրի» մաս:

ԱՆՃԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (ԿԱՍ «PPE»)



- Եթե աշխատավայրում ձեզնից պահանջվում է դիմակ կրել, ձեր գործատուն պետք է դրանք տրամադրի անվճար և անհրաժեշտության դեպքում փոխարինի նորով:
- Չնայած բոլոր դիմակներն են ապահովում որոշակի պաշտպանություն, դեմքը լավ գրկող շնչադիմակները (respirators)՝ հատկապես N95-ը, ապահովում են լավագույն պաշտպանությունը:
- Եթե դուք այլ մարդկանց հետ աշխատում եք փակ տարածքներում կամ փոխադրամիջոցներում և ցանկանում եք կրել շնչադիմակ (respirator), ձեր գործատուն պետք է տրամադրի անվճար շնչադիմակներ, եթե դրանք խնդրեք: Ձեր գործատուն պետք է տրամադրի ճիշտ չափի շնչադիմակ և պետք է ձեզ սովորեցնի այն ճիշտ կրել, ներառյալ՝ ինչպես ստուգել, թե արդյոք այն կիպ է նստում դեմքին:
- Ձեր գործատուն չի կարող խանգարել ձեզ աշխատավայրում դիմակ կրել կամ վրեժխնդիր լինել դա անելու համար:
- Շնչադիմակները (respirator) պետք է փոխարինվեն նորով, եթե դրանք կեղտոտվեն: Եթե դուք օգտագործում եք շնչադիմակ, ստուգեք արտադրողի ցուցումները՝ իմանալու, թե որքան ժամանակ կարող եք դրանք կրել նախքան դեն նետելը: Բժշկական դիմակները մեկ անգամ կրելուց հետո անհրաժեշտ է դեն նետել:

Իմացեք ավելին՝ ph.lacounty.gov/masks:



Ծանաչեք ձեր իրավունքները

COVID-19-ի ԹԵՍՏԱԿՈՐՈՒՄ



- Գործատուները պետք է աշխատանքային ժամերին անվճար թեստավորում առաջարկեն ցանկացած աշխատողի, ով աշխատանքի վայրում սերտ շփում է ունեցել COVID-19-ի վարակարի հետ կամ կարող է շփում ունեցած լինել աշխատավայրում բռնկման ժամանակ (բացի այն աշխատողներից, որոնք ապաքինվել են COVID-19-ից վերջին 30 օրվա ընթացքում և չունեն ախտակիշներ):
- Թեստավորումը կարելի է անել ձեր գործատուի միջոցով, ձեր բժշկի գրասենյակում կամ բժշկական կենտրոնում, տեղական առողջապահական բաժանմունքում կամ համայնքային թեստավորման կենտրոնում:
- «Անվճար» նշանակում է, որ ձեր գործատուն պետք է փակի թեստավորման ձեր բոլոր ծախսերը՝ ներառյալ վճարի ձեր աշխատավարձը թեստավորման ժամանակահատվածի համար (ներառյալ թեստավորման վայր գնալ-գալու համար): Նրանք պետք է նաև փոխհատուցեն ձեր թեստավորման ճանապարհածախսը (օրինակ՝ մեքենայի մղոնների կամ հասարակական տրանսպորտի համար):

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐ



- Եթե չեք կարող աշխատել COVID-19-ի պատճառով, այդ մասին անմիջապես հայտնեք ձեր գործատուին:
- Կալիֆորնիայի վճարովի հիվանդության արձակուրդի մասին մշտական օրենքը վերաբերում է աշխատողների մեծամասնությանը և պահանջում է, որ գործատուները տրամադրեն հիվանդության պատճառով բացակայության տարեկան ամսվազն 40 ժամ կամ 5 օր: Դուք կարող եք այս ժամանակն օգտագործել ֆիզիկական/հոգեկան հիվանդությունից կամ վնասվածքից հետո ապաքինվելու, կանխարգելիչ խնամքի համար կամ եթե կարիք ունեք խնամելու եք ձեր ընտանիքի անդամին:
- Լոս Անջելեսի շրջանի որոշ քաղաքներ նույնպես ունեն օրենքներ հիվանդության վճարովի նվազագույն արձակուրդի մասին: Օրինակ՝ Լոս Անջելեսի քաղաքապետարանը պահանջում է, որ իրավասու աշխատողները ստանան տարեկան 48 ժամ կամ 6 օր հիվանդության վճարովի արձակուրդ:
- Եթե կարծում եք, որ դուք աշխատավայրում վարակվել եք COVID-19-ով, կարող եք ձեր գործատուին ներկայացնել աշխատողների փոխհատուցման պահանջ՝ բժշկական վճարները, կորցրած աշխատավարձերը և ձեր հիվանդության հետ կապված այլ ծախսերը հոգալու համար:
- Եթե դուք ունեք COVID-19 և չեք կարող աշխատել, կարող եք ներկայացնել հաշմանդամության ապահովագրության (DI) հայց, որպեսզի օգնեն ձեզ կատարել վճարումները: Անհրաժեշտ կլինի, որ դուք ապացույցներ ունենաք ձեր բժշկից կամ նախնազի կամ տեղական առողջապահության մասնագետից այն մասին, որ դուք ունեք COVID-19:

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ, ԵԹԵ ԱՇԽԱՏԱԿԱՅՐՈՒՄ COVID-19-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱՏ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՄ



- Խոսեք Ձեր ղեկավարի կամ անվտանգության ներկայացուցչի հետ:
- Խոսեք Ձեր միության ներկայացուցչի հետ:
- Բողոք ներկայացրեք Cal/OSHA՝ զանգահարելով (213) 576-7451 կամ 833-579-0927 հեռախոսահամարներով: